ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1961 Общественные науки

Ա. Մ. Ազիզարյան

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

/

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը նախաձեռնել է ստեղծելու «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակը, որը նշանակալից երևույթ կհանդիսանա մեր հասարակական-քաղաքական կյանքում։

Բոլորիս ցանկությունն է, որ ձեռնարկած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակը բարձր լինի իր որակով, իր գիտական մակարդակով, իսկ դրան կօգնի խստապահանջությունը թե հեղինակային կոլեկտիվի կողմից և թե գիտական հասարակայնության կողմից աշխատանքների հենց ներկա էտապում։ Այս առումով էլ մենք հետևյալ պահանջն ենք ներկայացնում։

Խոսելով տասնիններորդ դարի վերջի և քսաներորդ դարի սկզբների անդրկովկասյան հայ իրականության մասին, «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակում պետք է որոշակի տալ հայ ազգի անդրկովկասյան հատվածի թե դասակարգային կառուցվածքը և թե յուրաքանչյուր դասակարգի առանձնահատկությունները իրենց զարգացման մեջ։

Նախ, ինչպիսին է դրությունը դրականության մեջ՝ հայ ազգի դասակարգային կառուցվածքի նկատմամբ։ Պետք է ասել, որ սովետական գիտնականներից առաջինը Մ. Ադոնցն էր, որը, հիմք ունենալով 1897 թ. մարդահամարի վիճակագրական տվյալները և հաղթահարելով շատ դժվարություններ, իր «Экономическое развитие Восточной Армении» աշխատության մեջ (էջ 519) տալիս է Հայաստանի ազգաբնակչության՝ 797,900 հոգու սոցիալական կառուցվածքը հետևյալ ձևով.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խոշոր բուրժուազիա, կալվածատերեր, բարձր պաշտոնյաներ և այլն | 22.6 | հազ. | հոգի, | 2,83 տոկ. |
| Ունևոր մանր տնտեսատերեր | 112,5 | » | » | 14,1 » |
| Չքավոր մանր տնտեսատերեր | 301,2 | » | » | 37,75 » |
| Պրոլետարներ և կիսապրոլետարներ | 361.6 | » | » | 45,32 » |
| Ընդամենը | 797,9 | » | » | 100 տոկոս |

Ով ծանոթ է 1897 թ. մարդահամարի տվյալներին և գիտե, թե ինչպիսի խոշոր դժվարություններ պետք էր հաղթահարել՝ փորձելու տալ որևէ ազգի, մանավանդ Հայաստանի ներկա տերիտորիայով սահմանագծված ազգաբնակչության սոցիալական կառուցվածքը, չի կարող չուրախանալ ընկ. Մ. Ադոնցի այս

նախաձեռնությունը։ Ընկ. Մ. Ադոնցի վերը բերած տվյալները, անշուշտ, հավակնություն չունեն բացարձակ ճշտությամբ դրսևորելու հայ ժողովրդի սոցիալական, դասակարգային կազմը, սակայն, նրանք մոտավոր ճշտությամբ դրսևորում են այն տենդենցները, որոնք հատուկ էին մեր ժողովրդի արևելյան հատվածի սոցիալ-տնտեսական կյանքին՝ 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած։

Պետք է նշել, սակայն, որ Հայաստանի ազգաբնակչության սոցիալական կամ դասակարգային կառուցվածքի մասին վերը բերած տվյալները լիովին բավարար համարվել չեն կարող։ Նախ՝ դեռևս 1902 թ. հոկտեմբերին լենինյան-իսկրայական ուղղություն ունեցող «Պրոլետարիատ» անլեգալ թերթում (Թիֆլիս) հրապարակված մանիֆեստում «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»՝ ղեկավարությամբ Ստ. Շահումյանի, Ռ. Կնունյանցի, Ա. Զոհրաբյանի, Ս. Խանոյանի, նշում է «Կովկասի ազգաբնակչության բազմացեղությունն ու ազգությունների աշխարհագրական բաժանման բացակայությունը»։ Եվ իրոք, նույն 1897 թ. տվյալներով վրաց ժողովրդի 99,7 տոկոսը դեռ անցյալ դարի վերջերից ապրում էր իր ներկա տերիտորիայում։ Այլ էր ադրբեջանցիների դրությունը։ Ճիշտ է, նրանց գերակշռող տոկոսը (64,6%) ապրում էր ներկայիս տերիտորիայի վրա, սակայն, դգալի մասը տեղավորված էր ինչպես Հայկական ՍՍՌ-ի ներկա տերիտորիայի վրա (19,7%), այնպես էլ Վրացական ՍՍՌ-ի ներկա տերիտորիայում (11,3%)։ Միանգամայն այլ պայմաններում էր տեղավորված հայ ժողովուրդը Անդրկովկասում։ Նրա բնակչության միայն 40,9 տոկոսն էր կենտրոնացած ներկայիս Հայկական Ռեսպուբլիկայի տերիտորիայի վրա։ 31,7 տոկոսը ապրում էր Ադրբեջանում և 20,3 տոկոսը՝ Վրաստանում։

Սա պատմական փաստ է և կազմում է մեր ժողովրդի առանձնահատկություններից մեկը, որը չի կարելի անտեսել։ Այսպիսով, հայ ժողովրդի արևելյան հատվածի դասակարգային կառուցվածքը շարադրելիս պետք է վերցնել Անդրկովկասի ֆոնը, Անդրկովկասում ապրող ողջ հայ ազգաբնակությունը։ Երկրորդ՝ հանրահայտ փաստ է, որ թե հայ բուրժուազիայի և թե հայ պրոլետարիատի գերակշռող մասի կազմավորումը տեղի է ունեցել Հայաստանից դուրս, մինչդեռ Մ. Ադոնցի աղյուսակի տվյալները վերաբերում են Հայաստանի ներկա տերիտորիայի վրա ապրած ազգաբնակչության։ Երկրորդ. առանձին չի տրված պրոլետարիատի քանակը. պրոլետարիատը և կիսապրոլետարիատը միացված են և կազմում են ազգաբնակչության 45,32%-ը, որը ինքնին չի բացահայտում, թե որքան էր հայ արդյունաբերական պրոլետարիատը և որքան գյուղական պրոլետարիատը։ Ի դեպ, Լենինն իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ նույնպես միացնում է պրոլետարներին և կիսապրոլետարներին (63,7 միլիոն), բայց նա միաժամանակ նշում է պրոլետարների թիվը (22 միլիոնից ոչ պակաս)[1]։

Ելակետ ունենալով նույն 1897 թվականի մարդահամարի տվյալները, մենք փորձել ենք տալ Անդրկովկասի (ոչ միայն Հայաստանի) հայ ազգաբնակչության շերտավորումը և դասակարգային կառուցվածքը, մոտավորապես ուրվագծելով հայ կալվածատիրական դասի, գյուղացիության, բուրժուազիայի և բանվորության տեսակարար կշիռը դարավերջին և նրանից հետո։

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 654։

Ահա մեր հանրագումարը՝

| № | Դասակարգեր | Բացարձակ թիվը ընտանիքի անդամների հետ | Տեսակարար կշիռը |
|---|---|---|---|
| 1 | Ազնվական կալվածատ., բարձր հոգևոր. . . . . | 9,457 | 0.8 |
| 2 | Գյուղացիություն . . . . . | 821,510 | 70.0 |
| | Այդ թվում | | |
| | Ունևորներ . . . . . | 106,800 | 9,1 70,0 |
| | Միջակներ . . . . . | 328,604 | 28,1 |
| | Չքավորներ . . . . . | 386,106 | 32,8 |
| 3 | Բուրժուազիա (արդյունաբ. և առևտր.) . . . . | 85,760 | 7,3 |
| 4 | Բանվորություն . . . . . | 190,210 | 16,2 |
| 5 | Արհեստավորներ, անայնագործներ, մանր առևտր. և այլն . . . . . | 66,159 | 5,7 |
| | Ընդամենը . . . | 1,173,096 | 100.0 |

Սակայն չի կարելի բավարարվել միայն հայ ազգի դասակարգային կառուցվածքը նշելով։ Բազմահատորյակում անհրաժեշտ է տալ, թե հայ իրականության գնահատականը և թե, որ գլխավորն է, շարադրել յուրաքանչյուր դասակարգի առանձնահատկությունները, որոնց ընդհանուր հաշվառումը միայն կարող է բանալի հանդիսանալ շատ «կնճռոտ» հարցերի լուսաբանման ու լուծման համար։

Իրոք, ի՞նչ սոցիալ-տնտեսական բնույթ ուներ Անդրկովկասի հայ իրականությունը, ո՞րն էր նրա գլխավոր նկարագիրը։ Վերը բերած աղյուսակը ցույց է տալիս, որ Անդրկովկասի հայ ազգաբնակչության խոշոր մասը մանրբուրժուական և կիսապրոլետարական խավերն էին։ Այս հանգամանքը սքողել կամ անտեսել չի կարելի մի շարք հարցեր քննարկելիս։ Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ նշել է. «Ռուսաստանի բնակչության մանրբուրժուական խավերի շատությունն սքողելը մեր տնտեսական իրականության պատկերն ուղղակի կեղծել կնշանակեր»[2]։ Սա ամբողջովին վերաբերում է նաև Անդրկովկասի հայ իրականությանը, իսկ մենք գիտենք մանր բուրժուազիայի երերուն վիճակը և տատանումը մերթ գեպի բուրժուազիան, մերթ դեպի պրոլետարիատը։

Այդ սոցիալ-տնտեսական ֆոնի վրա, անշուշտ, պետք է տալ, կրկնում ենք, յուրաքանչյուր դասակարգի առանձնահատկությունները։ Համառոտակի թվենք այդ առանձնահատկությունները.

Անդրկովկասյան հայ բուրժուազիան գերազանցապես կազմավորվել է Հայաստանի նկրկա տերիտորիայից դուրս — Բաքվում, Թիֆլիսում, Բաթումիում, Հյուսիսային Կովկասում և այլն։ Երկրորդ՝ նա «նորելուկ» և որոշ իմաստով «պատահական» կերպով բարձր տնտեսական դիրքերի հասած հասարակական շերտ էր։ Անդրկովկասի հայ արդյունաբերական բուրժուազիայի նախնիքը ոչ խոշոր կալվածատերեր են եղել, ոչ-խոշոր ազնվականներ, ոչ-խոշոր մանուֆակտուրիստներ։ Նրա կազմավորումն սկսվում է անցյալ դարի երկրորդ կեսից. նախ

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 3, էջ 656։

հայ կապալառուներից, որոնք կովկասյան պատերազմների ժամանակ ցարական բանակին մթերք ու այլ ծառայություններ էին անում, ըստ որում չարհամարելով ամեն տեսակի մութ միջոցները, ապա՝ հայ գյուղական վաշխառուներից ու ցեցերից, այնուհետև հայ առևտրականներից, մանր խանութպաններից։ Այս բոլորի ձևավորմանը անսպասելիորեն օգնում են նավթի հարստությունները։

Ահա թե ինչ վկայություն է տալիս ժամանակակիցը։

«Նավթի արդյունաբերությունն իր զարգացման ամենաբարձր աստիճանին է հասնում 90-ական թվականներին։ Մարդիկ հարստանում են արագ կերպով, հնշտությամբ միլիոնատեր են դառնում, գործի մեջ դնելով թեկուզ ամենաչնչին կապիտալ։ Եթե բախտը բերեց, «շատրվանը» խփեց, մանր բաժնետերերը կարճ ժամանակում նորագույն ասպետներ են դառնում։ Գյուղական վաշխառուն, մանր խանութպանը մի չորս-հինգ տարվա ընթացքում դառնում է խոշոր կապիտալիստ»[3]։

Այս առանձնահատկությունը («Նորելուկ», «Բիրդան աղա») նույնպես խոշոր չափով պայմանավորեց հայ արդյունաբերական բուրժուազիայի նկարագիրը, նրա բարոյական դեմքը, նրա վարվելակերպը, նրա սոցիալական, քաղաքական ձգտումները։

Երրորդ—Անդրկովկասյան հայ բուրժուազիան խոշոր դիրքեր ուներ տնտեսական կյանքում և այդ դիրքերը քանի գնում ուժեղանում էին և ոչ թե թուլանում։ Այսպես, 900-ական թվականներին Թիֆլիսի արդյունաբերական ձեռնարկությունների 50,7 տոկոսը, նրանց տարեկան շրջանառության 74,6 տոկոսը պատկանում էր հայ բուրժուազիային, իսկ բանվոր-ծառայողների 73,7 տոկոսը կենտրոնացած էին հայ բուրժուազիային պատկանող ձեռնարկություններում[4]։

Թիֆլիսի 6 բանկերից 4-ը հայկական բուրժուազիայի ձեռքին էին։

Թիֆլիսի շուրջ ութ հազար անշարժ կայքի կեսից ավելին հայկական բուրժուազիայի սեփականությունն էր։ Բաքվի նավթահորերի կեսը հայ բուրժուազիային էր պատկանում։ Նա զբաղում էր միայն նավթի մշակման և փոխադրման ասպարեզում։ Նույն շրջանում Անդրկովկասի բանկային կապիտալի արժեթղթերի մեծագույն մասը—40 միլ. արժեքով, կենտրոնացած էր հայ բուրժուազիայի ձեռքում։ Բաքվում 1905 թ. տվյալներով հայ կապիտալիստներն իրենց ձեռքին ունեին անշարժ գույքերի 10,5 տոկոսը, սակայն, կենտրոնացրել էին իրենց ձեռքում այդ գույքերի արժեքի 37,5 տոկոսը։ Բաքվի առևտրական ձեռնարկությունների 25 տոկոսը հայ կապիտալիստներին էր պատկանում[5]։

Զգալի էր հայ կապիտալի մասնակցությունը ռուսական ֆինանսական կապիտալի մեջ։ Գր. Ջաղեթյանի տվյալներով 1917 թ. Ռուսաստանում գոյություն ունեցող 53 ակցիոներական-առևտրական բանկերի հիմնական կապիտալների առնվազն 12 տոկոսը (շուրջ 81,6 միլիոն ռուբլի) պատկանում էր հայ բուրժուազիային և մասնավորապես խոշոր հայ կապիտալիստներին—Մանթաշյաններին, Ժամհարյաններին, Ղուկասյաններին և այլն։

---

3 Ս. Տ. Արկոմեդ, Բանվորական շարժումը և սոց.-դեմոկր. Անդրկովկասում, էջ 96—97։

4 Նույն տեղում, էջ 240։

5 Գր. Ջաղեթյան, «Ռուսումնասիրության կարոտ հարցերից», «Նոր ուղի», գիրք երրորդ, էջ 133։

Ռուսական բուրժուազիայի նման, անդրկովկասյան հայ բուրժուազիան նույնպես երկչոտ էր ու շողոքորթ ցարիզմի առաջ։ Նրա «պայքարը» ռուսական ցարիզմի դեմ պատգամավորություններ կազմելուց և հանրագրեր մատուցելուց դենը չի անցել։ Անդրկովկասյան հայ բուրժուազիան աղգուրաց էր և ցարական ասիմիլյացիոն բաղաքականությանը հլու ենթարկվող։ Նա ձայնակցելով ռուս բուրժուազիային, հավանություն է տվել թուրքահայ վիլայեթների աննեկսիային ցարիզմի կողմից։ Հայ խոշոր բուրժուազիան իր ապահովության գրավականը (թե միջազգայնորեն կազմակերպված պրոլետարիատի ըմբոստացումների գծով, թե գյուղացիական շարժումները ճնշելու գծով) տեսնում էր ցարիզմի՝ ամենառեակցիոն իշխանության պաշտպանության մեջ։

Մեր պատմական գրականության մեջ տարածված է մի շաբլոն. եթե ազգային-ազատագրական շարժում է, անպայմանորեն նրա ղեկավարը բուրժուազիան է, այն էլ խոշոր բուրժուազիան։ Այս կապակցությամբ հիշատակելի է Ֆ. Էնգելսի մի դրույթը, որը վերաբերում է լեհական ազգային-ազատագրական շարժմանը. «Շլյախտան,—գրում է Ֆ. Էնգելսը 1892 թ. «Կոմունիստական մանիֆեստ»-ի լեհերեն հրատարակության առաջաբանում—չկարողացավ ոչ պաշտպանել և ոչ էլ կրկին նվաճել Լեհաստանի անկախությունը։ Բուրժուազիայի համար ներկայումս այդ անկախությունը առնվազն նշանակություն չունի... Այդ անկախությունը կարող է նվաճել միայն լեհական երիտասարդ պրոլետարիատը. ընդ որում այն նրա ձեռքերում լիովին ապահովված է։ Որովհետև մնացած ամբողջ Եվրոպայի բանվորների համար Լեհաստանի անկախությունը նույնպես անհրաժեշտ է, ինչպես և իրենց՝ լեհական բանվորների համար»։ Ուկրաինայի ազգային ազատագրման համար մղվող պայքարում 20-րդ դարի առաջին տասնամյակների փորձը ցույց տվեց—նշում է Լենինը,—որ միակ հասարակական առաջատար ուժը դա բանվոր դասակարգն է։

Այս բոլորը մեզ պարտադրում է կոնկրետ պատմական վերլուծության ենթարկել Անդրկովկասյան հայ բուրժուազիայի կազմավորման և զարգացման առանձնահատկությունները և հաշվի առնելով դրանք, լուսաբանել նրա դերն ու տեղը հայ ազգային-ազատագրական շարժման մեջ, պատասխանել այն հարցին, թե արդյոք նա ի վիճակի՞ էր, կամ կարո՞ղ էր, կամ թե գլխավորո՞ւմ էր հայ ազգային-ազատագրական շարժումը։ Մեր կարծիքով կոպիտ սխալ կլիներ հավասարության նշան դնել Մադրասի, Կալկաթայի 18-րդ դ. հայ առևտրական բուրժուազիայի և 19—20 դարերի սկզբների անդրկովկասյան հայ բուրժուազիայի միջև, նույնացնել նրանց տնտեսական ու քաղաքական նկարագիրը, նրանց ձգտումները և այլն։

Անդրկովկասի հայ, ինչպես նաև այլ ազգությունների բանվորական շարժման ուժեղացման հետևանքով էր, որ հայ խոշոր բուրժուազիան, առավելապես 19-րդ դ. վերջում և 20-րդ դարի սկզբում, հանդես է գալիս ազգայնական գաղափարների հրահրումով, որպեսզի ջլատի բանվորական ուժերի միասնությունը։ 20-րդ դարասկզբին Անդրկովկասի բանվորության և գյուղացիության ռևոլյուցիոն ընդվզումները կասեցնելու և ճնշելու համար, ցարիզմը, հայ բուրժուազիայի և ադրբեջանական ազնվականության մարտական տարրերի մասնակցությամբ, հրահրեց ազգամիջյան ընդհարումներ։ Հայ բուրժուազիային և ադրբեջանական ազնվականությանն հաջողվեց ժամանակավորապես ռևոլյուցիայի և ազգային-ազատագրական շարժումը նենգափոխել ազգամիջյան անտագոնիզմի պատգարախոսությամբ։

Ռևակցիոն այդ գաղափարախոսությունն էր, որով ազգայնական պարտիաները աշխատում էին տարածել անդրկովկասյան և Հայաստանի մանր-բուրժուական տարրերի, գյուղացիության և բանվորության որոշ մասի մեջ։ Այդ հակաժողովրդական տենդենցների դեմ էր, որ իրենց հետևողական պայքարով հանդես էին գալիս Անդրկովկասի, այդ թվում և հայ բանվորության գաղափարախոսները՝ հանձին ՌՍԴ(բ) կազմակերպությունների և նրանց ղեկավարների Անդրկովկասի և Հայաստանի տարբեր վայրերում։

Առանձնահատկություններ ունի նաև հայ բանվորության կազմավորումն ու նրա զարգացումը քննարկվող ժամանակաշրջանում։ Որո՞նք են այդ առանձնահատկությունները. առաջին—հայ բանվորությունը Անդրկովկասում կազմավորվել է հիմնականում գյուղացիությունից և մասամբ միայն նաև քայքայվող արհեստավորներից կամ մանր արդյունաբերողներից. 1910 թ. հայ բանվորության 89 տոկոսն էր գյուղացիությունից, 1912 թ.՝ 82 տոկոսը։ Եվ այդ հայ բանվորության խոշորագույն մասը դեռևս չէր կտրել իր կապերը գյուղի հետ։ Ստեպանիի տվյալներով Բաքվի հայ բանվորության 82,7 տոկոսը գյուղում հողաբաժիններ ուներ, որոնցից նա դեռևս չէր հրաժարվել։ Մի այլ աղբյուրի տվյալներով՝ Բաքվի հայ բանվորությունը իր ստացած աշխատավարձի մոտ 30 տոկոսը ամեն ամիս ուղարկվում էր գյուղ՝ իր հողաբաժինների ծախքերը, պարտքերը հոգալու։ Երկրորդ, այդ բանվորությունը կազմավորվում էր գերազանցապես Հայաստանի նեղլկա տերիտորիայից դուրս, ողջ հայ բանվորությունը Անդրկովկասում 900-ական թվականներին հաշվվում էր շուրջ 28,000 հոգի, որից միայն 6000-ն էր աշխատում ներկա Հայաստանի տերիտորիայի վրա գտնվող ձեռնարկություններում և այդ բանվորությունն ու նրան առաջնորդող սոցիալ-դեմոկրատական (բոլշևիկյան) պարտիան էր թե սոցիալական և թե ազգային-ազատագրական պայքարի միակ ճիշտ ուղիով ընթացող առաջատար ուժը։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկներն իրենց ստեղծագործություններում տվել են մանր բուրժուազիայի տնտեսական-քաղաքական սպառիչ բնութագիրը։ «Մանր բուրժուան,— գրում է Լենինը,— գտնվում է այնպիսի տնտեսական գրության մեջ, նրա կյանքի պայմաններն այնպես են, որ նա չի կարող չխարվել, նա ակամա և անխուսափելիորեն հակվում է մերթ դեպի բուրժուազիան, մերթ դեպի պրոլետարիատը։ Նա ինքնուրույն «գիծ» ունենալ տնտեսապես չի կարող։ Նրա անցյալը քաշում է նրան դեպի բուրժուազիան, նրա ապագան՝ դեպի պրոլետարիատը։ Նրա բանականությունը ձգտում է դեպի վերջինս, սրա նախապաշարումը (ըստ Մարքսի հայտնի արտահայտության) դեպի առաջինը»[6]։

Լենինի այս բնորոշումը մանր բուրժուազիայի մասին ամբողջովին վերաբերում է նաև Անդրկովկասի, ինչպես ռուս, վրացի, ադրբեջանցի, նույնպես և հայ մանր բուրժուազիային։

Սակայն մարքսիզմ-լենինիզմը պահանջում է վեր հանել կոնկրետ պատմական իրադրության մեջ ապրող ու առաջ ընթացող մանր բուրժուազիայի առանձնահատկությունները, առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են, կամ հետևանք են պատմական զարգացման կոնկրետ պայմանների։

Որո՞նք էին պատմական զարգացման այդ կոնկրետ պայմանները։ Հետռեֆորմյան շրջանից սկսած՝ ընդհուպ մինչև 1917 թվականը զարգացող կապիտալիզմը և ռուսական ցարիզմը նպաստել են ու հովանավորել հայ բուրժուա-

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 25, էջ 246։

ալիային, սկզբնական էտապում նրա առևտրական հատվածին, ապա՝ առևտրա-արդյունաբերական, արդյունաբերական և ֆինանսական հատվածներին։

Մինչդեռ զարգացող կապիտալիզմը, ռուսական ցարիզմը իրենց գաղութային բաղաքականությամբ, քայքայում էին Անդրկովկասի մանր բուրժուազիային, այդ թվում նաև հայ մանր բուրժուազիային՝ ստվարացնելով պրոլետարիատի շարքերը։ Մետրոպոլիայից Անդրկովկաս ներմուծված արդյունաբերական ապրանքները կործանիչ հարված էին հասցնում ու քայքայում Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի արհեստներն ու տնայնագործությունը, այսինքն՝ քաղաքային մանր բուրժուազիային։ Ցարիզմի հողային քաղաքականությունը, գաղութային կոլոնիզացիոն ֆոնդեր ստեղծելը, հարկային և կապալային սիստեմը, որի մասին հնարավորություն չունենք երկար խոսելու, ավելացրած դրան ցարական ադմինիստրացիայի կամայական ու կաշառակեր բնույթը, այս բոլորը քայքայում էին գյուղացիությանը, իսկ զարգացող կապիտալիստական հարաբերությունները, զարկ տալով ու ուժեղացնելով գյուղի շերտավորումը՝ ավելի ևս արագացնում էին գյուղական մանր բուրժուազիայի քայքայման պրոցեսը։

Հենց այս պատճառով հայ գյուղացիությունը և քաղաքային արհեստավորությունը բոլորովին անմասսակից չէր Անդրկովկասի և Ռուսաստանի պրոլետարիատի ռևոլյուցիոն հասունացման պրոցեսին։ Մանր բուրժուազիան միատարր չէր, և նրա հարստահարվող ու չքավոր շերտերը յուրահատուկ ձևով ըմբոստանում էին թե ցարական կարգերի և թե տիրապետող ազգամիջյան անտագոնիզմի դեմ։ Նշելով ազգայնական պարտիաների ազդեցությունը մանրբուրժուական սասանվող շերտերի, մասնավորապես գյուղացիության վրա, Շահումյանը միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ 20-րդ դարի սկզբում բոլշևիկյան պարտիան, ի հակադրություն տիրապետող նացիոնալիզմին, իր գաղափարներով հող էր գտնում նաև մանր բուրժուազիայի քայքայվող, հարստահարվող շերտերի ու չքավոր գյուղացիության մեջ։ Այդ մանր բուրժուազիայի մի մասի ըմբոստացումը ցարական կարգերի, ավատականության և գյուղական զորբաների դեմ իր արտացոլումն է գտել նաև հայ գեղարվեստական գրականության մեջ, դեռ վաղուց, թեկուզ հանձին Աղայանի «Երկու քույր» վեպի հերոս Արզումանի, հանձին Պ. Պողոշյանի Հունոյի, Հովհաննես Թումանյանի «Հառաչանք»-ի Զոբան Զատիի, Ծերունու և այլ գեղարվեստական կերպարների։ Հայ գրականության այդ շրջանի շատ գործերում արտացոլված են Անդրկովկասի հայ քայքայվող մանր բուրժուազիայի, մասնավորապես հայ չքավոր գյուղացիության ռևոլյուցիոն պոռթկումները, որոնք տեղի էին ունենում Հայաստանի գյուղերում և Անդրկովկասի քաղաքներում, սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից։ Հասարակական այդ տարրերն էին, որ XX դ. սկզբից ընկալում էին բռնության, քաղաքական ստրկացման դեմ ուղղված լենինյան պարտիայի ներկայացուցիչների կոչը։

Միանգամայն պարզ է, որ մանրբուրժուական այդ ընդվզումները չէին ընդունում և չէին կարող ընդունել հետևողական ռևոլյուցիոն մասսայական բնույթ և ունեին անկազմակերպ, անարխիական բունտերի, անհատական տերրորի բնույթ։ Հենց մանր բուրժուազիայի այդ դեմոկրատական տարրերն էին, սակայն, որ ռևոլյուցիոն շարժման օժանդակ ռեզերվն էին կազմում։

Հայկական մանր բուրժուազիայի միջին և ավելի ունևոր մասը ենթարկ-

վում էր տիրապետող բուրժուական, նացիոնալիստական գաղափարախոսությանը։

1906 թվականին Ստ. Շահումյանը, վերլուծելով գյուղացիական շարժումը Ռուսաստանում և Անդրկովկասում, նշում է. «Ագրարային շարժումը Կովկասում ևս տեղի ունի, և առանձնապես արտահայտվում է ուժեղ ու կազմակերպված կերպով. նրա արևմտյան մասում, Թիֆլիսի և Քութայիսի շրջաններում։

Այդ տեղերում գյուղացիները հերոսական կռիվներ են մղում, որոշակի առաջադրելով—ամբողջ հողի ու ամբողջ ազատություն լողունգը։ Իսկ արևելյան Կովկասը, Երևանի, Բաքվի, Գանձակի նահանգները լռում են, կարծես թե Ռուսաստանի անցուդարձը նրանց երբեք չի վերաբերում, նրանց կենսական ու անմիջական շահերը չի շոշափում»[7]։

Անդրկովկասի հայ մանր բուրժուազիայի ոչ միայն գյուղացիական որոշ շերտերն էին վարակված ազգայնական թույնով, այլև արհեստավորների ու տնայնագործների, մանր առևտրականների և մանրբուրժուական մտավորականության զգալի մասը։

Ավելին՝ այդ թույնով էր վարակվում նաև հայ բանվորության մի մասը. «Չկա ավելի կարևոր հայ բանվորի և ընդհանրապես հայ ժողովրդական մասսայի համար,—գրում էր Ստ. Շահումյանը,—քան թողնել հին նացիոնալիստական ճանապարհը և ընդգրկել մեր միջազգային իդեալները»։ (Ստ. Շահումյան, Երկեր, հոդ. 2, էջ 410—415)։

Քսաներորդ դարեսկզբի երկու տասնամյակների պատմական փորձը, մեր ժողովրդի այդ ժամանակաշրջանի պատմության ողբերգական էջերը սթափեցրին ամբողջ հայ ժողովրդական մասսային, որը վերջնականապես ընկալեց անդրդվելի մի ճշմարտություն, այն է՝ միայն բոլշևիկյան պարտիայի, միայն Լենինի ցույց տված ուղին է ապահովում բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի, ազգային և սոցիալական ազատագրումը։

Վերջացնենք. «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակման համապատասխան բաժնում պետք է որոշակի վերլուծման ենթարկվի ու շարադրվի հայ ազգի Անդրկովկասյան հատվածի դասակարգային կառուցվածքը, այդ դասակարգերի կազմավորման ու զարգացման առանձնահատկությունները XIX դարի վերջին և XX դարի սկզբին։

---

[7] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 171։